ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԶԱՐԹՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЗАРТОНКИ ГЮГАПЕТАРАН

Գ.ԶԱՐԹՈՆՔ
Հեռ. 093-18-56-92

Թիվ 145
26 Նոյեմբերի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ. Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնք գյուղական համայնքի ավագանու թիվ 8 հերթական նիստի որոշումները կայացած 17.11.2014թ.:

Առդիր 9 թերթ:

Զարթոնքի գյուղապետ Պ.Սարգսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 12.19/13479-14
01 12 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

,, 17 ,, Նոյեմբերի 2014թ. Թիվ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջարթոնք գյուղական համայնքի ավագանու 2014 թվի 17-ի նոյեմբերի թիվ 8 հերթական նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Մելքոնյան Ժորիկ ----------
2. Համադյան Ջադա ----------
3. Ավդալյան Կոտե ----------
4. Սարգսյան Խաչիկ ----------
5. Մելքոնյան Գևորգ ----------

Ջարթոնք համայնքի ղեկավար ժ/պ՝ Ն.Մարտիրոսյան

գ.Ջարթոնք

Կ.Տ. ,, 17 ,, նոյեմբերի 2014թ.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

2. 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

,, 17 ,, Նոյեմբերի 2014թ. Թիվ 2-Ն

2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի և ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին կետով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջարթոնք գյուղական համայնքի 2013թվ. դեկտեմբերի 9-ի թիվ 10 արտահերթ նիստի ,,2014 թվականի Ջարթոնք համայնքի բյուջեն հաստատելու մասին,, թիվ 3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները :
2. Համայնքի բյուջեի եկամտային մասի փոխադրամիջոցների գույքահարկը ավելացնել 770,0 հազ. դրամով:
   Ծախսային մասով 770,0 հազ.դրամը հատկացնել հետևյալ հոդվածներին:
   01/1/1 - 4214 հոդվածին ավելացնել 12,0 հազ.դրամ
   01/1/1 – 4234 հոդվածին ավելացնել 40,8 հազ.դրամ
   01/3/3 – 4232 հոդվածին ավելացնել 7,2 հազ.դրամ
   01/6/1 – 4269 հոդվածին ավելացնել 250,0 հազ.դրամ
   09/8/1 – 4655 հոդվածին ավելացնել 300,0 հազ.դրամ
   10/4/1 - 4729 հոդվածին ավելացնել 160,0 հազ.դրամ
3. Համայնքի վարչական բյուջեի պ/ֆոնդից 379,5 հազ.դրամը հատկացնել հետևյալ հոդվածներին՝
   01/1/1 – 4212 հոդվածին ավելացնել 99,5 հազ.դրամ
   01/6/1 – 4241 հոդվածին ավելացնել 80,0 հազ.դրամ
   08/2/4 – 4267 հոդվածին ավելացնել 50,0 հազ.դրամ
   10/7/1 – 4729 հոդվածին ավելացնել 150,0 հազ.դրամ
4. 06/4/1 – 5112 հոդվածից պակասեցնել 480,0 հազ.դրամ
   01/1/1 – 5122 հոդվածին ավելացնել 230,0 հազ.դրամ
   01/6/1 – 5129 հոդվածին ավելացնել 250,0 հազ.դրամ
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

1. Մելքոնյան Ժորիկ ----------
2. Համադյան Ջադա ----------
3. Ավդալյան Կոտե ----------
4. Սարգսյան Խաչիկ ----------
5. Մելքոնյան Գևորգ ----------

Ջարթոնք համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ն.Մարտիրոսյան

17 Նոյեմբերի 2014թ.

Կ.Տ. գ.Ջարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> Նոյեմբերի 2014թ. ԹԻՎ 3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության 8-րդ և 10-րդ հոդվածներով և ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ձարթոնք համայնքի տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

1. Մելքոնյան Ժորիկ _____
2. Համադյան Ձադա _____
3. Ավդալյան Կոտե _____
4. Սարգսյան Խաչիկ _____
5. Մելքոնյան Գևորգ _____

Ձարթոնք համայնքի ղեկավար՝ _____ Ն.Մարտիրոսյան

17 Նոյեմբերի 2014թ.
գ.Ձարթոնք

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երկու հազար դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեք հազար դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
   1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար հինգ հազար դրամ:
   2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար հինգ հազար դրամ:
5. Համայնքի տարածքում՝
   1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ:
   2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ.
7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24-00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   1) առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ,
   2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,
   3)բաղնիքների (սաունաների) համար երկու հարյուր հազար դրամ,
   4) խաղատների կազմակերպման համար հինգ հարյուր հազար դրամ,
   5) շահումով խաղերի կազմակերպման համար երկու հարյուր հիսուն հազար դրամ,
   6) վիճակախաղերի կազմակերպման համար մեկ հարյուր հազար դրամ,
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
   1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը, մինչև 20 ծավալային տոկոսի արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,
   2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,
   3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ,
   4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:
11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
13. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել երեք հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> Նոյեմբերի 2014թ. Թիվ 4-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՐԹՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Աշխատանքային օրենսգրքի,, 219 հոդվածի 1 կետի 2-րդ մասով և հաշվի առնելով կատարած աշխատանքները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ձարթոնք գյուղական համայնքի գյուղապետի պարգևատրել 100,0 հազար դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Մելքոնյան Ժորիկ _____
2. Համադյան Ձադա _____
3. Ավդալյան Կոտե _____
4. Սարգսյան Խաչիկ _____
5. Մելքոնյան Գևորգ _____

Ձարթոնք համայնքի ղեկավարի ժ/պ Ն.Մարտիրոսյան

Կ.Տ.

գ.Ձարթոնք
,, 17 ,, Նոյեմբերի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

,, 17 ,, Նոյեմբերի 2014թ. Թիվ 5-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով և հաշվի առնելով քաղաքացիների գրավոր դիմումները

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Տալ համաձայնություն գյուղապետի ժ/պ-ին՝ համայնքի թվով երկու ընտանիքներին ցուցաբերել ֆինանսական օգնություն համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Մելքոնյան Ժորիկ ----------
2. Համադյան Զադա ----------
3. Ավդալյան Կոտե ----------
4. Սարգսյան Խաչիկ ----------
5. Մելքոնյան Գևորգ ----------

Զարթոնք համայնքի ղեկավար ժ/պ՝ Հ.Մարտիրոսյան

գ.Զարթոնք
,, 17 ,, Նոյեմբերի 2014թ.

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՁԱՐԹՈՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ԹԻՎ 5-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն, անուն հայրանուն	Գումարի չափը հազ.դրամ	
1	Ասատրյան Մանուշակ Վալիկոյի	100.0	
2	Սլոյան Փորսոր Հասանի	100.0	

Աշխատակազմի քարտուղար՝ Ք.Աջոյան